

ՓՈՒՍԱՏԵՂՈՒՄ

Ուսանողների փոխատեղումը կազմակերպվում է ամեն ուսումնական տարվա վերջում՝ տվյալ ուսումնական տարվա արդյունքների հիման վրա: Փոխատեղման համար նախատեսված տեղերի քանակը որոշվում է հիմքում ունենալով պետպատվերով ընդունված ուսանողների քանակը՝ բացառությամբ բանակից զորացրվածների, նպատակայինների, արտոնյալների (1-ին և 2-րդ կարգի հաշմանդամներ, երկկողմանի ծնողազուրկներ)՝, վերջիններս, անկախ ցուցաբերած առաջադիմությունից, ուսումը շարունակում են անվճար համակարգում: Փոխատեղմանը մասնակցում են վճարովի և անվճար համակարգի բոլոր առաջադիմող ուսանողները (բացառությամբ վերոգրյալների):

Փոխատեղման իրականացումը:

Ընդունենք, որ 2008-2009 ուս. տարում Օտար լեզուների ֆակուլտետի Օտար լեզու և գրականություն՝ անգլերեն լեզու բաժին է ընդունվել 200 ուսանող, որոնցից 160-ը՝ վճարովի /100 ԱՄ, 60 վճարովի/, 40 պետպատվեր /4 ԲԶ, 18 ՆԳ, 18 ՊՊ/:

Փոխատեղումն իրականացվելու է Միջին Որակավորման Գնահատականի /ՄՈԳ/ հիման վրա:

Ընթացիկ ՄՈԳ-ի հաշվարկը տես «ԵրՊԼՀ-ում ուսումնական գործընթացի կազմակերպման կրեդիտավարկանշային համակարգի» կարգի IX գլխի 9.3 ենթակետում:

Տարեկան և ուսումնառության ամբողջ ընթացքի ՄՈԳ-ը հաշվարկվում է ոչ թե կիսամյակային ՄՈԳ-երի միջին թվաբանականի հաշվարկման բանաձևով ($\frac{ՄՈԳ_1 + ՄՈԳ_2 + \dots + ՄՈԳ_n}{ՄՈԳ_n}$), այլ կիսամյակային վարկանիշային միավորները (ՎՄ)

ՄՈԳ_n

գումարելով և ուսումնառության ընթացքի կրեդիտների վրա բաժանելով:

Օրինակ՝

Անուն Հայրանուն Ազգանուն

Պողոս Պողոսի Պողոսյան

Աշնանային կիսամյակ 2005թ.

| Դասընթացի անվանումը | Կրեդիտ | Թվային միավոր | |
|---------------------|-----------|---------------|-------------------------|
| Դասընթաց 1 | 10 | 4,0 | |
| Դասընթաց 2 | 6 | 3,7 | |
| Դասընթաց 3 | 4 | 3,3 | |
| Դասընթաց 4 | 4 | 3,7 | |
| Դասընթաց 5 | 2 | 3,0 | |
| Դասընթաց ՈԿ չտվող | 4 | 2,7 | |
| ԾԿ | ՈԿ | ՎՄ | Կիսամյակային ՄՈԳ |
| 30,00 | 26,00 | 96,20 | 3,70 |

Ընդհանրացված արդյունքները 2005թ. աշնանային կիսամյակից հետո

| ԾԿ | ՈԿ | ՎՄ | Կիսամյակային ՄՈԳ |
|-------|-------|-------|------------------|
| 30,00 | 26,00 | 96,20 | 3,70 |

Գարնանային կիսամյակ 2006թ.

| Դասընթացի անվանումը | Կրեդիտ | Թվային միավոր |
|---------------------|--------|---------------|
| Դասընթաց 1 | 12 | 3,0 |
| Դասընթաց 2 | 4 | 4,0 |

| | | |
|-------------------|---|-----|
| Դասընթաց 3 | 6 | 3,7 |
| Դասընթաց 4 | 2 | 2,7 |
| Դասընթաց 5 | 4 | 4,0 |
| Դասընթաց ՈԿ չտվող | 2 | 2,3 |

| ԾԿ | ՈԿ | ՎՄ | Կիսամյակային ՄՈԳ |
|-------|-------|-------|------------------|
| 30,00 | 28,00 | 95,60 | 3,41 |

Ընդհանրացված արդյունքները 2006թ. գարնանային կիսամյակից հետո

| ԾԿ | ՈԿ | ՎՄ | Կիսամյակային ՄՈԳ |
|-------|-------|--------|------------------|
| 60,00 | 54,00 | 191,80 | 3,55 |

ԾԿ - Ծրագրային կրեդիտ

ՈԿ - Որակավորման կրեդիտ

ՎՄ - Վարկանշային միավոր